ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
22-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ՝

Նիստը վարում էր Ալավերդի համայնքի ղեկավար Արկադի Թամազյանը:

Նիստին մասնակցում էին Ալավերդի համյանքի ղեկավարի խորհրդական Ռ.Դավթյանը, մամուլի քարտուղար Ա.Ղորխմազյանը, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր, պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Նիստը արձանագրվում էր աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Հ.Գալստյանի կողմից:

Նիստից բացակայում էին «Ապրելու երկիր» խմբակցության ավագանու անդամ Ս.Զախարովը և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ Մ.Պեպանյանը:

Ժամը 15^{05}-ին նիստը վարողի կողմից ներկայացվեց համայնքի ավագանու նիստի քվորում լինելու վերաբերյալ: Ավագանու նիստը սկսվեց ժամը 15^{06}-ին:

Համայնքի ղեկավար Արկադի Թամազյանն առաջարկեց, անհրաժեշտությունից ելնելով նիստի ներկայացված օրակարգի նախագծում ներառել «*Հայաստանի հանրապետության լոռու մարզի ալավերդի համայնքի ավագանու 17 մայիսի 2023 թվականի թիվ 42-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*» հարցը և հաստատել օրակարգը:

ԼՍԵՑԻՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԶԵԿՈՒՅՑԵՑ - **Ա.Թամազյանը,**
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Ձավարյանը:

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 22-ի հերթական նիստի օրակարգը՝

    1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 22-ի վեցերորդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
    (Զեկ. Ա. Թամազյան)

2. Ալավերդի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները ու պայմանները սահմանելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

4. Ալավերդի Համայնքում առեվտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

5. Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

6. Ալավերդի համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման կարգը հաստատելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

7. Ալավերդի համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 01-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 01–ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգ սահմանելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

8. Ալավերդի համայնքի վարչական տարածքում «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, վճարի գանձման» կարգ սահմանելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

9. Ալավերդի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

10. Ալավերդի համայնքի արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

12. Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0150-0404 ծածկագրով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

13. Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0158-0068 ծածկագրում գտնվող հողամասն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

14. Ալավերդու համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0160-0010 ծածկագրում գտնվող բնակարանի զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

15. Հաղպատ գյուղում գտնվող /06-060-0220-0023 ծածկագրից առանձնացվող/, դատարանի վճռով Անյուտա Հենրիկի Սարգսյանի սեփականության իրավունքը ճանաչված անասնաշենքի զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

16. Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-017-0312-0003 ծածկագրում գտնվող 2.79481 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները պարզեցված կարգով փոփոխելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

17. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող մի քանի հողամասեր օտարելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

18. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

19. Ալավերդի համայնքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

20. Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

21. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող 06-002-0050-0239 կադաստրային ծածկագրով 0.92495 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

22. Ալավերդի համայնքի Ամոջ, Փոքր Այրում, Բենդիկ, Ախթալա և Առողջարանին կից գյուղերի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը մեկ այլ բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

23. Արտուշ Մերուժանի Աբելյանին Ալավերդի համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

24. Սասուն Վրույրի Վարդումյանին Ալավերդի համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:
(Զեկ. Ա. Թամազյան)

25. Ալավերդի համայնքի ավագանու 18.04.2023թ. N 31-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

26. Ալավերդի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

(Զեկ.՝ *Ա. Թամազյան)*

27. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի հերթական նստաշրջանի նիստերի օրերը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

28. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

29. Ալավերդի համայնքի 2023 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

30. Հայաստանի հանրապետության լոռու մարզի ալավերդի համայնքի ավագանու 14 դեկտեմբերի 2022 թվականի թիվ 39-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

31. Հայաստանի հանրապետության լոռու մարզի ալավերդի համայնքի ավագանու 17 մայիսի 2023 թվականի թիվ 42-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

2. ԼՍԵՑԻՆ – ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Ձավարյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջները .

համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Ալավերդի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:
2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

<u>Հանրային սնունդ</u> (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,

<u>Հանրային սննդի ծառայություն</u>՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջնե-րի բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր,

<u>Խոհարարական արտադրանք</u>՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակ-ների և կիսապատրաստվածքների համախումբ,

<u>Ճաշացուցակ</u>՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգ-վածի և գնի նշումով,

<u>Հանրային սննդի օբյեկտներ</u>՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կա-ռուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր,

<u>Վաճառող</u>՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կա-տարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմա-կերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝
   ա/ ճաշարաններ.
   բ/ ռեստորաններ.

գ/ սրճարաններ.

դ/ բարեր.

ե/ բուֆետներ.

զ/ խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար իրավաբանական անձինք կամ ան-հատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկա-վարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրա-կանացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տա-նող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տըր-ված թույլտվության դեպքում:

8. Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

9. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպու-թյուններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրա-ցումը:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

11. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգա-չափված չափման միջոցներով:

12. Օրենքով սահմանված շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտ-ներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշ-մամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկ-տի համար առանձին վճարելու դեպքում:

13. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:

14. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

15. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):

16. Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

17. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին հա-մապատասխան պաշտոնի նշմամբ:

18. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:

19. Անվանաքարտ կրում են համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի աշխատողները՝ աշխատավայրում գտնվելու ժամանակահատվածում:

20. Անվանաքարտն աշխատողին տրվում է աշխատանքի ընդունման հրամանի հետ կամ աշխատանքային պարտականությունների անցման պահին:

21. Անվանաքարտի վրա հայերեն տպագիր տառերով լրացվում է՝

ա) կազմակերպության ֆիրմային անվանումը,

բ) աշխատողի անունը, ազգանունը,

գ) աշխատողի զբաղեցրած պաշտոնը:

22. Անվանաքարտը պետք է պարունակի աշխատողի գունավոր լուսանկարը՝ նվազագույնը 30մմ x 40մմ չափսերով:

23. Անվանաքարտը վավերացվում է գործատուի ստորագրությամբ և կնիքով:

24. Անվանաքարտը աշխատողը կրում է իր արտահագուստի կամ հագուստի վրա, կամ այն դրվում է արտահագուստի վրա թափանցիկ նյութից կարված գրպանիկի մեջ:

25. Անվանաքարտ կրելու կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում անվանաքարտ կրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 29 օգոստոսի 2005 թվականի N 182-Ն որոշմամբ:

26. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

27. Աշխատողներից խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մաս-նագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկա-յական:

28. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչ-պես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

29. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհա-րարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվա-նումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

30. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կա-նոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

31. Սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է համայ-նքի ղեկավարի հանձնարարությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի միջոցով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ լիազոր տեսչական մարմնի միջոցով:

32. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 0 դեմ, 12 ձեռնպահ:

3. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Ձավարյանը, Դ.Ղումաշյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետով՝

համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին (այսուհետ՝ քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահ) ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:

2. Քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվությունը տալիս է Ալավերդու համայնքապետը՝ ընթացիկ տարվա տեղական տուրքի վճարման անդորրագրի հիման վրա, եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրման պահին (ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ անգամ) համապատասխանում է սույն հավելվածով սահմանված սահմանափակումներին, պահանջնե-րին և պայմաններին:

3. Առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացումը և (կամ) մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝

1) ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, հյուրանոցներից, բազմաբնակարան շենքերից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից, հանրային սննդի օբյեկտներից նվազագույնը 100մ, իսկ անհատական բնակելի տներից նվազագույնը 70մ հեռավորության վրա բացառությամբ, եթե դրանք գտնվելու են՝

ա. հիվանդանոցներում գործող ախտաբանաանատոմիական բաժիններում կամ բաժան-մունքներում, կամ

բ. գերեզմանատների զբաղեցված հողամասի սահմանից մինչև 50մ հեռավորության վրա, կամ

գ. միայն անհատական բնակելի տներից և (կամ) հանրային սննդի օբյեկտներից մինչև սույն կետի առաջին ենթակետում նշված հեռավորությունների վրա և առկա է դրանց սեփա-կանատերերի գրավոր համաձայնությունը

5. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին և պայմաններին՝

1) Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենան՝

ա. նախասրահ՝ հանդերձարանով,

բ. հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ,

գ. շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման համար առանձնացված վայր (տարածք),

դ. սանհանգույց (առնվազն 2 հատ, որից մեկը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվա-րություններ ունեցող անձանց համար),

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորմամբ սենյակ,

զ. հուղարկավորությունը ստանձնողների ընդունման համար նախատեսված առանձին մուտքով գրասենյակային տարածք,

2) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է մատչելի լինի տեղա-շարժման դժվարություններ ունեցող անձանց համար՝ առնվազն մինչև հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ, զուգարան և առաջին բժշկա-կան օգնության սենյակ մուտք գործելու համար,

3) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահում հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպ-քում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք, նախասրահ, սանհանգույցներ,

4) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահով զբաղեցված և դրա սպա-սարկման համար անհրաժեշտ հողատարածքը՝ ներառյալ սույն կետի 6-րդ ենթակետով նախատեսված տարածքը պետք է ունենա առնվազն երկու մետր բարձրությամբ անթափանց նյութերով կառուցված ցանկապատ կամ պարիսպ:

Ընդ որում քաղաքացիական հոգեհանգստի իրականացման ծառայությունները իրակա-նացվում և (կամ) մատուցվում են միայն սրահի ցանկապատված տարածքում այնպես, որ սրահի տարածքից դուրս գտնվող անձանց համար սգո պարագաները, այդ թվում՝ ծաղիկները և ծաղկեպսակները տեսանելի չլինեն՝ բացառությամբ ավտոկայանատեղիի,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան և հասցեի նշմամբ ցուցանակներ, ընդ որում ցուցանակները պետք է լինեն լուսավորված,

6) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահի տարածքը պետք է ունենա յուրաքանչյուր հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 20 ավտոմեքենայի համար նախատեսված կայանատեղ,

7) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահին կից պետք է լինի հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 100 քմ մակերեսով տարածք՝ քաղաքացիական հոգեհանգստի արարողությանը մասնակցող անձանց գտնվելու համար՝ ապահովված աղբամաններով, լուսավորությամբ և ծխելու համար նախատեսված (առանձնացված) հատվածով,

8) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր,

9) քաղաքացիական հոգեհանգստի սրահը շահագործողը պետք է ունենա բժշկի որակավորում ունեցող աշխատակից կամ համապատասխան պայմանագիր Ալավերդի համայնքում գործող բժշկական հաստատությունների հետ՝ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ողջ ժամանակահատվածում բժշկի ներկայությունը ապահովելու համար՝ անհրաժեշտության դեպքում առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով,

10) քաղաքացիական հոգեհանգստի սրահի շահագործողը քաղաքացիական հոգեհանգստի սրահում ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ընթացքում պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ (սանիտարահամաճարակաբանական) նորմերի ու կանոնների պահպանումը:

6. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը կարող է ունենալ նաև հոգևորականի համար նախատեսված սենյակ, ինչպես նաև առանձին մուտքով ծաղիկների և սգո պարագաների վաճառքի սրահ, որի ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

4. ԼՍԵՑԻՆ – ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ, ԸՍՏ ԴՐԱՆՑ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի,

համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Ալավերդի համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու համար սահմանել՝

1) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100 մետր հեռավորության վրա՝ ժամը 22.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

2) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100-1000 մետր հեռավորության վրա՝ ժամը 23.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

3) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից 1000 մետր և ավելի հեռավորության վրա՝ ժամը 24.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը:

2. Սույն որոշման իմաստով առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրակա-նացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրը խախտող գործողություններ են ցանկացած գործողություն, որը աղմուկ է առաջացնում և խանգարում է քաղաքացիների լիակատար հանգստությունը, ներառյալ անձնական գործողությունները, մեխանիկական միջոցների և տեխնիկական միջոցների գործողությունները, այդ թվում՝ հրատեխնիկական արտադրանքի, ներառյալ հրավառության օգտագործումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 0 դեմ, 12 ձեռնպահ:

5. ԼՍԵՑԻՆ – ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ.Հախվերդյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Ձավարյանը, Ա.Դավթյանը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի պահանջները

համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ԿԱՐԳ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Ալավերդի համայնքի վարչական սահման-ներում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բա-րեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը միջոցառումների համալիր է, որն ուղղված է Ալավերդի հա-մայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բը-նակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայն-քի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պար-տադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքնե-րը:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Ալավերդի համայնքի վարչական սահմաննե-րում տեղակայված (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփակա-նատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրա-պետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հա-րակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկա-պատման կամ ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորության ապահովումը՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատումը.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատումը և դրանց փոխումը, փոխարինումը.

6) ներհամայնքային և միջհամայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յու-րաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ.

7) սույն մասով սահմանված բարեկարգման աշխատանքները և դրանց նկատմամբ վերահսկողությունը իրականացվում են համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան (գլխավոր հատակագծի առկայության դեպքում) :

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ընդգրկում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքնե-րի ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվություն-ների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատե-րերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխա-տանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ կառավարու-թյան 2003 թվականի «Կառուցապատման, նախագծի մշակման, փորձաքննության, համաձայ-նեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N608-Ն և ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվու-թյան և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N91 որոշումներով նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Ալավերդի համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվը-ճար մշակվում և տրվում է ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինու-թյան ոլորտը համակարգող բաժնի (մասնագետի) կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Ալավերդու համայնքապետարանի

կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Ալավերդու համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման (մասնագետի) կողմից սույն Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգն-ման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահոված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարե-լուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14. Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը համակարգող բաժնի (մասնագետի) կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտա-րապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը համակարգող բաժնի (մասնագետի) հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը սույն Կարգին համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր

բարեկարգման աշխա-տանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրա-վունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործ-ման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապե-տվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգ-ման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբա-ղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզ-րաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պա-տասխանատվություն:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 0 դեմ, 12 ձեռնպահ:

6. ԼՍԵՑԻՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դ.Ղումաշյանը,

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ալավերդի համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ԿԱՐԳ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Ալավերդի համայնքի սեփականություն համարվող գույքի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների կազմակերպման, համայնքային գույքի շրջանառության, գույքի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրակա-նացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրները:

2. Ալավերդի համայնքի գույք է համարվում Ալավերդի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը, բնակարանները, ոչ բնակելի տարածքները, շենքեր և շինությունները, ինքնակամ կառույցները և այլ անշարժ ու շարժական գույքը, գույքային իրավունքը, իրավանաբական անձանց կանոնադրական կապիտալում Ալավերդի համայնքի մասնակցությունը (այսուհետ՝ գույք):

3. Համայնքային գույքի կառավարման հարաբերությունների կարգավորումը ներառում է՝

1) գույքի կառավարման հիմնախնդիրների լուծումը

2) գույքի հաշվառման բնագավառում միասնական սկզբունքների սահմանումը և հաշվառման բազայում ամբողջ համայնքային գույքի ընդգրկումը, ինչպես նաև հաշվառման տվյալների ճշգրտության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ընտրանքային ուսումնասիրու-թյունների անցկացումը.

3) գույքի մշտադիտարկումը, համայնքային գույքի օգտագործումը և պահպանումը, համայնքային գույքի շրջանառության նպատակի իրականացումը.

4) գույքի հանձնումը համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների կառավարմանը.

5) գույքի կառավարման բնագավառում համայնքային քաղաքականության ուղղությունների սահմանումը.

6) գույքի օտարման ոլորտում քաղաքականության մշակումն ու իրականացումը.

7) համայնքին պատկանող գույքային իրավունքների կառավարման ոլորտում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը:

4. Համայնքային գույքի կառավարման ոլորտում Ալավերդի համայնքի ավագանու իրավա-սություններն են՝

1) որոշում է ընդունում այն մասին, թե որ գույքն է հանձնվում համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների կառավարմանը.

2) որոշում է ընդունում այն մասին, թե Ալավերդի համայնքի ենթակայության որ կազմակեր-պություններն են հանձնվում համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղե-կավարների ենթակայությանը.

3) որոշում է ընդունում Ալավերդի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ:

4) իրականացնում է նաև օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

5. Համայնքային գույքի կառավարման ոլորտում Ալավերդի համայնքի ղեկավարի լիազորություններն են՝

1) ավագանուն է ներկայացնում Ալավերդի համայնքի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը, դրան համապատասխան՝ տնօրինում է Ալավերդի համայնքի սեփականություն համարվող գույքը.

2) ավագանուն է ներկայացնում Ալավերդի համայնքի զարգացման միամյա, հնգամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերը.

3) ավագանուն է ներկայացնում հողամասերի նպատակային նշանակության փոփոխության մասին նախագծերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում.

4) սահմանում է Ալավերդի համայնքի շենքերի և շինությունների, ինչպես նաև հողամասերի համարակալումը.

5) համայնքային գույքի կառավարման ոլորտում Ալավերդ համայնքի անունից կնքում է գործարքներ և գործարքներով մյուս կողմի համար նախատեսված պարտավորությունների կա-տարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

6) իրականացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորու-թյուններ:

II ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Համայնքային գույքի կառավարման սկզբունքներն են՝

1) համայնքային գույքի կառավարման ոլորտում միասնական քաղաքականության վարում.

2) համայնքային գույքի կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովում.

3) համայնքային գույքի կառավարման ոլորտում գործող մասնակիցների գործառույթների և շահերի ներդաշնակության ապահովում:

7. Համայնքային գույքի կառավարման նպատակներն են՝

1) համայնքային գույքի կառավարման արդյունավետության բարձրացում.

2) համայնքային գույքի կառավարման միասնական համակարգի ձևավորում.

3) համայնքային գույքի արդյունավետ կառավարման շնորհիվ համայնքային բյուջեի եկամուտների ավելացում.

4) համայնքային գույքային շրջանառության բնագավառում միասնական քաղաքականության իրականացում.

5) համայնքային գույքի ամբողջական հաշվառում.

6) առևտրային կազմակերպություններում համայնքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասի (բաժնետոմսի) կառավարման արդյունավետության բարձրացում.

7) համայնքային գույքային հարաբերությունների կարգավորում:

III ՀԱՄԱՅՔԱՅԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄԸ

8. Համայնքային անշարժ գույքի հաշվառում է համարվում համայնքային անշարժ գույքի վիճակի և չափերի, նպատակային նշանակության, ինչպես նաև օգտագործողների և օգտագործման ձևերի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը:

9. Համայնքային անշարժ գույքի հաշվառման ենթակա օբյեկտներ են համայնքի սեփակա-նություն համարվող անշարժ գույքը՝ հողամասերը, շենքերը, շինությունները, տարածքները, արհեստական կառույցները և այլ անշարժ գույքը:

10. Համայնքային անշարժ գույքի հաշվառման տեղեկություններն օգտագործվում են անշարժ գույքի մշտադիտարկման համար, որի նպատակն է բարելավել համայնքային անշարժ գույքի օգտագործումը և պահպանումը, կանխատեսել համայնքային անշարժ գույքի նկատմամբ համայնքի հեռանկարային պահանջը:

11. Համայնքային գույքի հաշվառման գրանցամատյանը էլեկտրոնային եղանակով կազմված տեղեկատվական համակարգ է, որը ներառում է հաշվառման ենթակա օբյեկտների մասին միասնական մեթոդաբանական և ծրագրային-տեխնիկական սկզբունքներով կազմված տեղե-կություններ:

12. Համայնքային անշարժ գույքի հաշվառման տվյալների հավաստիության բարձր մակար-դակն ապահովելու նպատակով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով և ժամկետներում իրականացվում է անշարժ գույքի գույքագրում, որը հաստատվում է Ալավերդի համայնքի ավագանու կողմից:

IV ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Համայնքային անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

14. Յուրաքանչյուր տարի համայնքային անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման նախատեսված աշխատանքների իրականաց-ման համար համայնքային բյուջեից հատկացվում են դրամական միջոցներ:

V ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

15. Համայնքային գույքի իրական արժեքը որոշելու նպատակով այն ենթակա է պարբերա-բար գնահատման Ալավերդի համայնքի ավագանու կողմից սահմանած կարգով և ժամկետ-ներում:

VI ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ

16. Համայնքային գույքի օտարումը պետք է լինի հիմնավորված, ապահովի որոշակի խնդրի արդյունավետ լուծում:

17. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման հետ կապված հարաբերություններն ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286, Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օգ-տագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի որոշումներին և հողային հարաբե-րությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

18. Համայնքային գույքի օտարման ժամանակ գույքի (բացառությամբ չկառուցապատված առանձին հողամասի) վաճառքի գինը հաշվարկվում է՝ ելնելով գույքի գնահատված արժեքից՝ Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատած ծրագրով:

19. Համայնքային գույքի օտարումն իրականացվում Ալավերդի համայնքի ավագանու կողմից յուրաքանչյուր տարի հաստատած Ալավերդի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրով:

20. Համայնքային գույքի (բացառությամբ հողամասերի) օտարման եղանակներն են՝

1) հրապարակային սակարկություն (մրցույթ կամ աճուրդ).

2) ուղղակի վաճառք.

3) նվիրատվություն կամ նվիրաբերություն.

4) փոխանակություն.

21. Համայնքային գույքը (բացառությամբ հողամասերի) հրապարակային սակարկություններով օտարման ներկայացնելիս՝

1) ընտրվում է մրցույթով վաճառքի եղանակը, եթե գնորդը գույքի սեփականության իրավունքը ձեռք բերելու հետ մեկտեղ գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով գործարար ծրագրին համապատասխան պետք է ստանձնի որոշակի պարտավորություններ.

2) ընտրվում է աճուրդի վաճառքի եղանակը, եթե գնորդից չի պահանջվում կատարել որևէ պարտավորություն:

22. Համայնքային գույքը (բացառությամբ հողամասերի) օտարվում է ուղղակի եղանակով՝

1) տվյալ գույքի օգտագործողին, եթե Ալավերդի համայնքի ղեկավարի որոշմամբ այլ բան սահմանված չէ.

2) ձեռք բերողներին՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում.

3) այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք փաստացի տիրապետում և օգտա-գործում են իրենց բնակարաններին և տարածքներին անմիջապես կից ոչ բնակելի տարածք-ները, որոնց մուտքերը բացառապես բնակարաններից և տարածքներից են և դրանք այլ մուտք չունեն.

4) սոցիալական կամ բարեգործական կամ Ալավերդի համայնքի ավագանու հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու կամ Ալավերդի համայնքի ավա-գանու որոշմամբ հաստատված՝ այլ քաղաքների և այլ վարչատարածքային միավորների հետ համագործակցության մասին պայմանագրերից բխող Ալավերդի համայնքի գույքի ուղղակի վաճառքի փոխադարձ օտարման պարտավորության կատարման ապահովման նպատակով՝ Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ: Ալավերդի համայնքի ավագանու համապատաս-խան որոշմամբ և Գույքի ուղղակի վաճառքի պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք ծրագրերը կամ ներդրման չափն ու պայմանները, ինչպես նաև Գույքի ուղղակի վաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը:

23. Համայնքային գույքի օտարման եղանակը սահմանվում է օտարման մասին Ալավերդի համայնքի ղեկավարի որոշմամբ:

24. Համայնքային գույքի օտարումից ստացված դրամական միջոցները ուղղվում են Ալավերդի համայնքի բյուջե:

25. Գույքի նվիրատվության կամ նվիրաբերության, ինչպես նաև փոխանակության մասին որոշումը ընդունվում է Ալավերդի համայնքի ավագանու կողմից, բացառությամբ Ալավերդի հա-մայնքի ավագանու կողմից հաստատված ծրագրով նախատեսված դեպքերի:

26. Գույքի գրավադրման մասին որոշումը ընդունվում է Ալավերդի համայնքի ավագանու կողմից:

VII ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ) ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

27. Առևտրային կազմակերպություններում Ալավերդի համայնքի սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի) օտարումը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով:

VIII ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

28. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ տրամադրելու) հետ կապված հարաբերություններն ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդի-սացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադը-ման կարգը հաստատելու մասին» N 286, Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատ-ված Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի որոշումներին և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

29. Համայնքային գույքը (բացառությամբ հողամասերի) վարձակալության է տրամադրվում հետևյալ եղանակներով.

1) հրապարակային սակարկություններով.

2) ուղղակի եղանակով:

30. Գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում ուղղակի ձևով, եթե առկա է հետևյալ դեպքերից որևէ մեկը՝

1) եթե՝ համայնքի ինչպես սեփականության իրավունքի պետական գրանցում ունեցող, այն-պես էլ սեփականության իրավունքի գրանցում չունեցող անշարժ գույքի վարձակալները (որոնց հետ ստորագրված վարձակալության պայմանագրերը նոտարական վավերացում չեն ստացել, կամ այդ պայմանագրերը նոտարական վավերացում ստացել են, սակայն սահմանված ժամ-կետներում անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցում չեն ստացել) ամ-բողջությամբ վճարել են կամ Ալավերդի համայնքապետարանի աշխատակազմի կողմից հաշ-վարկված վճարները վճարելու և վարձակալական պայմանագիր կնքելու մասին գրավոր առա-ջարկություն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կվճարեն հաշվարկված վճարները,

2) եթե տվյալ գույքի վարձակալը պայմանագրի գործողության ամբողջ ժամկետում կատարել է պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները առանց խախտումների,

3) եթե մամուլում և (կամ) Ալավերդի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում հայտարարության հրապարակումից հետո առաջին հայտը ներկայացվելու օրվանից 10-օրյա ժամկետում այլ հայտեր չեն ներկայացվել և դիմողը միանվագ վճարում է առնվազն 3 ամսվա համար հաշվարկված վարձավճարը:

31. Համայնքային գույքն անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել՝

1) պետությանը.

2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց.

3) հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին.

4) միջազգային կազմակերպություններին.

5) քաղաքացիներին.

6) անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ կազմակերպությունների:

32. Համայնքային գույքը (բացառությամբ հողամասերի) վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման կարգը և դեպքերը սահմանվում են Ալավերդի հա-մայնքի ավագանու որոշմամբ:

IX ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

33. Համայնքային գույքի կառավարման և պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

7. ԼՍԵՑԻՆ – ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՏՎՅԱԼ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ (ՄԱՅԻՍԻ 01-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) և ՁՄԵՌԱՅԻՆ (ՆՈՅԵՄԲԵՐԻ 01–ԻՑ ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ.Ռամազյանը, Հ.Ձավարյանը, Ն.Թորոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 24-րդ կետերի պահանջները

համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Ալավերդի համայնքի վարչական տարածքում «Հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 01-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ և ձմեռային (նոյեմբերի 01-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման» կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ԿԱՐԳ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՏՎՅԱԼ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ (ՄԱՅԻՍԻ 01-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ (ՆՈՅԵՄԲԵՐԻ 01–ԻՑ ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույնով սահմանվում է Ալավերդի համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 01-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 01-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման հա-մար տարածքի օգտագործման պայմանները և սահմանափակումները:

2. Հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ հանրային սննդի օբյեկտին հարակից, Ալավերդի համայնքին պատկանող ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 01-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 01-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար Ալավերդու համայնքապետարանի համաձայնության վերաբերյալ Ալավերդու համայնքապետարանի և հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց միջև կնքվում է համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիր՝ վարձավճարի չափը սահմանելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով նախատեսված անշարժ գույքի հարկով հարկման նպատակով հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 15 տոկոսի չափով:

3. Օգտագործման հանձնվող տարածքի սահմանները որոշվելու են Ալավերդիի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Քաղաքաշինության և հողաշինության բաժնի հետ համաձայնեցված հատակագիծ սխեմայով:

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված պայմանագրի կնքման նպատակով՝ հանրային սննդի ծառայություն մատուցող դիմումատուն՝ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, Ալավերդի համայնքի ղեկավարին ուղղված գրավոր դիմում է ներկայացնում, որի հետ անհրաժեշտ է ներկայացնել նաև տարածքի սեփականության կամ վարձակալության իրավունքի պետական գրանցման վկայականի կամ վարձակալության պայմանագրի պատճենը, մասնագիտական որակավորում ունեցող չափագրողի կողմից տրամադրված չափագրության սխեման, ինչպես նաև քննարկվող տարածքի տեղադրության նշմամբ իրադրության հատակագիծը, իրավաբանական կամ ֆիզիկական անձի պետական գրանցման վկայականի պատճենը, անձնագրի պատճենը, տարածքի լուսանկարները, դրանց բացակայության դեպքում էսքիզային առաջարկը, հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության պատճենը և քննարկվող տարածքի հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 15 տոկոսի չափով սահմանված վարձավճարի վճարման անդորրագիրը:

5. Սույն կարգի 2-րդ կետում նշված պայմանագրի կնքման նպատակով ներկայացված դիմումների մուտքագրումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժինը քննարկվող տարածքի վերաբերյալ

գրավոր եզրակացություն է ներկայացնում Աշխատակազմի Եկամուտների հաշվառման, հավաքագրման, գույքի կառավարման, առևտրի և սպասարկման բաժնին:

6. Քաղաքացիաիրավական պայմանագիրը կնքվում է, եթե ամբողջությամբ վճարված է տարածքի օգտագործման վարձավճարը՝ տվյալ սեզոնի համար և Աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժինը ներկայացված դիմումի վերաբերյալ Աշխատակազմի Եկամուտների հաշվառման, հավաքագրման, գույքի կառավարման, առևտրի և սպասարկման բաժնին ներկայացրել է դրական եզրակացություն:

7. Դիմումը մերժվում է, եթե Աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժինը Աշխատակազմի Եկամուտների հաշվառման, հավաքագրման, գույքի կառավարման, առևտրի և սպասարկման բաժնին ներկայացրել է բացասական եզրակացություն:

8. Քաղաքացիաիրավական պայմանագրի կնքումից հետո մասնագիտական որակավորում ունեցող չափագրողի կողմից չափագրված հատվածը համարվում է հանրային սնընդի ծառայություն մատուցող դիմումատուի սպասարկման տարածք:

9. Տարածքը տրամադրվում է հանրային սննդի ծառայություն մատուցող անձին բացառապես տվյալ սեզոնի ընթացքում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու համար, որտեղ կարող են տեղադրվել համապատասխան սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ սեղաններ ու աթոռներ, տարածքի էսթետիկական պատշաճ տեսքն ապահովող ծաղկային կոմպոզիցիաներ կամ համանման այլ տարրեր, ինչպես նաև էսքիզային տարբերակով նախապես Ալավերդու համայնքապետարանի հետ համաձայնեցված հովանոցներ կամ ծածկոցներ՝ չխոչընդոտելով քաղաքացիների ազատ տեղաշարժվելու իրավունքը:

10. Տարածքը հանրային սննդի ծառայություն մատուցող անձին հանձնվում է քաղաքացիաիրավական պայմանագրի ստորագրման պահից՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

11. Քաղաքացիաիրավական պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, տարածքը հանրային սննդի ծառայություն մատուցող անձի կողմից ենթակա է ազատման և պատշաճ տեսքի վերականգնման:

12. Տարածքը հանրային սննդի ծառայություն մատուցող անձը պարտավորվում է օգտագործել քաղաքացիաիրավական պայմանագրի պայմաններին ու պահանջներին համապատասխան:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 0 դեմ, 12 ձեռնպահ:

8. ԼՍԵՑԻՆ - ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ» ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ- Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դ.Ղումաշյանը, Լ.Սարգսյանը, Հ.Հախվերդյանը, Հ.Ձավարյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները.

համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Ալավերդի համայնքի վարչական տարածքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, վճարի գանձման կարգ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ,ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Ալավերդի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, վճա-րի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, վճարի գանձման համար հիմք է հանդիսա-նում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետու-թյան օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչա-փերը սահմանելու մասին Ալավերդի համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլ-տվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

1. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտա-րական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նա-խատեսված անձիք:

2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վար-վի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

3. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Ալավերդու համայն-քապետարանի աշխատակազմի աշխատակիցները և (կամ) Ալավերդի համայնքի ավագա-նու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպու-թյունը (կազմակերպությունները):

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է.

2.7	ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է՝	
ա.	Ալավերդի քաղաքում անձնագրային հաշվառման կանոններով՝ ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական	150
	Ալավերդի համայնքի /բացառությամբ Ալավերդի քաղաքի/ բնակավայրերում անձնագրային հաշվառման կանոններով՝ ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական	100
բ.	կամ, ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսական՝	20
2.8	**Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շիրնարարական և խոշոր եզրաչափերի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար սահմանել՝**	
ա.	առևտրի, (այդ թվում շուկաների) հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	100
բ.	հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	50
գ.	արտադրական՝ արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունե-րի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	15
դ.	Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	15
ե.	Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով. - Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ բ/ ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար	 3000 10000

IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

1. Աղբահանության վճարի հաշվարկումը իրականացվում է Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և (կամ) Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորի կամ այլ կազմակերպության (կազմակերպությունների) կողմից;

2. Աղբահանության վճարը կատարվում է Ալավերդի համանյքապետարանի բյուջեի համապատասխան հաշվին անկանխիկ եղանակով;

3. Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի հաշվառման լիազորություններով օժտված օպերատորը և (կամ) կազմակերպությունը (կազմակերպությունները) Ալավերդի համայնքի ղեկավարին ներկայացնում է ամսեկան տեղեկատվու-թյուն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև մուծման գործառույթներ իրականացման արդյունքների (հաշվետվություն) վե-րաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

1. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համար-վում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

2. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.075 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար

VI. Այլ դրույթներ

1. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջերի նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Ալավերդի համայնքի ավագանու կողմից:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 12 դեմ, 0 ձեռնպահ:

9. ԼՍԵՑԻՆ - ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Դ.Ղումաշյանը, Հ. Ձավարյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով

համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Ալավերդի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել Ալավերդի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը (այսուհետ՝ կարգ): Սույն կարգն ընդունվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին հա-մապատասխան:
2. Արտաքին գովազդն (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկատվու-թյունների տարածումն է բնակավայրերում՝ տարբեր տեխնիկական միջոցների օգնությամբ (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլնի) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապ-րանքի կամ նախաձեռնությունների նկատմամբ:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը գովազդ չի համարվում:
4. Սույն կարգը տարածվում է բոլոր այն տարածքների վրա, որտեղ պետք է տեղադրվի գովազդը:
5. Ալավերդի համայնքի սեփականություն համարվող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով, կարգին և պայմաններին համապատասխան, Ալավերդի համայնքի ղեկավարին դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին) օգտագործման իրավունքով տրա-մադրվում է հողամաս՝ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարաձգելու պայմանով:
6. Այն դեպքում, երբ գովազդի միջոցը տեղադրվում է համայնքային սեփականություն չհանդիսացող տարածքում (կամ դրանց օգտագործմամբ), ապա գովազդի միջոցի տեղա-դրելու թույլտվության մասին որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ տվյալ տարածքի սեփականատիրոջ կամ տարածքի օգտագործողի համաձայնության առկայության դեպ-քում: Ընդ որում, գովազդատուի և տարածքի սեփականատիրոջ միջև հարաբերություններ-ը կարգավորվում են նրանց միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով:
7. Գովազդի միջոց տեղադրելու թույլտվության մասին որոշման նախագծին կցվում է գովազդատուի ու տարածքի սեփականատիրոջ միջև կնքված պայմանագրի պատճենը:
8. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1422-Ն որոշման պահանջներին:

2. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9. Ալավերդի համայնքի տարածքում գովազդ տեղադրելու թույլտվությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կարգի համաձայն տրվում է Ալավերդի համայնքի ղեկավարի որոշմամբ:
10. Համայնքի ղեկավարի որոշմանը կցվում են թույլտվությունը և գովազդի էսքիզը՝ համաձայն սույն կարգին կցված Ձև 1-ի և Ձև 2-ի:
11. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) դիմում-հայտ է ներկայացնում Ալավերդի համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, ազգանունը, հաշվառման վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:
12. Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահա-նակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնու-թյունը:
13. Ալավերդի համայնքի ղեկավարը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատու-ից (գովազդակրից) դիմում-հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պար-զում է գովազդային միջոցի համապատասխանությունը կարգի և պայմանների պահանջնե-րին (եթե այն թերի է, ետ է վերադարձվում՝ թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամ-կետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդ տեղադրելու թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը և կցվում է գովազդի էսքիզը:
14. Թույլտվության որոշման նախագծերը նախապատրաստում է Ալավերդու համայնքա-պետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժինը (առկայության դեպքում) կամ համապատասխան համայնքային պաշտոնատար անձը՝ նախագծին կցելով համապա-տասխան եզրակացությունը:
15. Սույն կարգի 4-րդ կետի համապատասխան՝ հատկացված տարածքի նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտե-րի առկայության դեպքում Ալավերդի համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկու-թյունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղա-դրման թույլտվություն:
16. Գովազդի միջոց տեղադրելու վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի) դիմում-հայտը 15 օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում եթե՝
    1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի և պայմաննե-րի պահանջներին.
    2) խախտվում են «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
    3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են այլ անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:
17. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու դեպքում՝ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

18. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդա-տուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գո-վազդի էսքիզը համաձայնեցվում է Ալավերդի համայնքի ղեկավարի հետ:
19. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն կարգի, պայմանների և այլ իրավական ակտերի պահանջներին:
20. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայ-տատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Ալավերդի համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծով:
21. Գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովու-թյան և դրա անվթար շահագործման համար:
22. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:
23. Գովազդ տեղադրելու թույլտվության ժամկետը լրանալու, պայմանագրով նախատես-ված հիմքերով այն վաղաժամկետ դադարելու, լուծելու դեպքում գովազդատուն (գովազ-դակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:
24. Սույն կարգով նախատեսված պարտավորությունները գովազդատուի (գովազդա-կրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ալավերդի համայնքի ղեկավարի որոշման համաձայն՝ գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրա-կանացվում է համայնքի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդ-ակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

3. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

25. Ալավերդի համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա հա-մար գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույ-քաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
26. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գո-վազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղա-կան տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:
27. Սույն կարգով նախատեսված հողօգտագործման վճարի չափը սահմանվում է Ալավերդի համայնքի ավագանու կողմից:
28. Սույն կարգով համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Ալավերդի համայնքի բյուջե:
29. Ալավերդի համայնքի տարածքում գովազդ տեղադրելու գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է Ալավերդի համայնքի

ղեկավարը, իսկ գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողու-թյունը՝ Լոռու մարզպետը:

30. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

10. ԼՍԵՑԻՆ – ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ.Ռամազյանը, Դ.Ղումաշյանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ալավերդի համայնքի արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ԿԱՐԳ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները:
2. Սույն կարգի նպատակներն ու խնդիրներն են՝
   - Ալավերդի համայնքում արոտավայրերի և խոտհարքների պահպանության և կայուն ու արդյունավետ օգտագործման գործընթացներին նպաստումը.
   - արոտավայրերի և խոտհարքների բերքատվության բարձրացման և վերականգնման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
   - արոտավայրերի և խոտհարքների որակական բնութագրերի և բնապահպանական վի-ճակի վատթարացման կանխումը.
   - արոտավայրերի և խոտհարքների սանիտարական վիճակում պահպանության ապա-հովմանը նպաստելը:
3. Մինչև արոտավայրերի օգտագործումը կազմվում է արոտավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվու-թյունը:
4. Արոտավայրերի կայուն և արդյունավետ օգտագործման նպատակով կիրառվում է արոտա-շրջանառություն՝ հետևյալ սկզբունքներով՝
   - մինչև արոտային շրջանի սկսվելն ընդհանուր արոտավայրը բաժանվում է առանձին արոտամասերի (արոտաբաժինների), որոնք արածեցվում են որոշակի հերթականու-թյամբ.
   - արածեցման հերթականությունը յուրաքանչյուր տարի փոփոխվում է.
   - նախորդ տարվա վերջին արածեցված արոտամասը հաջորդ տարում չի արածեցվում, թողնվում է «հանգստի»:
5. Արոտային շրջանի սկիզբը և ավարտը սահմանվում է յուրաքանչյուր տարի՝ ելնելով տվյալ տարվա կլիմայական պայմաններից:
6. Արոտային շրջանի տևողությունը հանրապետության ցածրադիր, հարթավայրային և նա-խալեռնային գոտիներում կազմում է՝
   - խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 210-240 օր,
   - մանր եղջերավոր կենդանիների համար՝ 270-300 օր,

   իսկ բարձր լեռնային գոտիներում համապատասխանաբար՝
   - խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 150-170 օր
   - մանր եղջերավոր կենդանիների համար՝ 180-210 օր:

7. Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածեցումների թիվն ամբողջ արո-տային շրջանում սահմանվում է՝
   - կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 2-3 անգամ.
   - տափաստանային գոտում՝ 3-4 անգամ.
   - մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 4-5 անգամ.
   - ենթալպյան գոտում՝ 5-6 անգամ.
   - ալպյան գոտում՝ 3 անգամ:

8. Կենդանիների արածեցումն սկսվում է գարնանը բույսերի վերաճն սկսվելուց 15-18 օր հետո, երբ արոտավայրում բույսերը հասել են հասունացման, իսկ արոտականաչի բարձրությունը հողի մա-կերեսից կազմում է՝
    - 1) կիսաանապատային, չոր տափաստանային և ալպյան գոտիներում՝ 6-8 սմ.
    - 2) տափաստանային գոտում՝ 10-12 սմ.
    - 3) մարգագետնատափաստանային, հետանտառային և ենթալպյան գոտիներում՝ 12-15 սմ բարձ-րություն:
9. Մեծ թեքություններում (15o և բարձր), որտեղ առկա է հողատարման (էրոզիա) վտանգ և բուսա-ծածկը համեմատաբար թույլ է, արածեցումը կատարվում է սահմանված ժամկետից 10-12 օր անց:
10. Կենդանիների արածեցման համար հատկացվող արոտատարածքի մակերեսը սահմանվում է՝ ելնելով արոտային թույլատրելի բեռնվածությունից:
11. Արոտային թույլատրելի բեռնվածությունն արտահայտվում է մեկ հեկտարի վրա տեղաբաշխ-վող պայմանական անասնագլխաքանակով և որոշվում հետևյալ բանաձևով՝

$$ԱԹԲ=ԲՊxՏ$$

որում՝
ԱԹԲ-ն՝ արոտավայրի թույլատրելի բեռնվածությունն է,
Բ-ն՝ 1 հա արոտավայրի բերքատվությունն է (խոնավ արոտականաչի զանգվածը), կգ/հա,
Պ-ն՝ 1 պայմանական անասնագլխաքանակի օրվա արոտակերի պահանջն է՝ կգ,
Տ-ն՝ արոտային շրջանի տևողությունը՝ օրերով:

12. Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու գլխաքանակին տարբեր գյուղատնտեսական կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝
    - կով, արտադրող ցուլ՝ 1.0.
    - խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0.66.
    - մանր եղջերավոր կենդանի՝ 0.1:

13. Մեկ պայմանական գլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ արոտատա-րածքը կազմում է՝
    - կիսաանապատային գոտում՝ 6-7 հա.
    - տափաստանային գոտում՝ 2-2.5 հա.
    - մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 1.5-1.7 հա.
    - ենթալպյան գոտում՝ 1-1.2 հա.
    - ալպյան գոտում՝ 2-2.5 հա:
14. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային (համակարգված) արածեցումն է, որի կի-րառման համար արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական անասնագլխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝
    - կիսաանապատային և չոր տափաստանային արոտավայրերում՝ 40-60 հա.
    - տափաստանային արոտավայրում՝ 20-40 հա.
    - մարգագետնատափաստանային և հետանտառային արոտավայրերում՝ 20-30 հա.
    - ենթալպյան և ալպյան արոտավայրերում՝ 10-20 հա:

15. Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը բաժան-վում է հետևյալ թվով արոտավանդակների՝

    -
    - ալպյան գոտում՝ 8-10.
    - ենթալպյան գոտում՝ 10-12.
    - մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 12-16.
    - տափաստանային գոտում՝ 16-20.

- կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 20-40:

16. Արոտավանդակներն առաջինից մինչև վերջինը, ըստ տեղադրվածության, արածեցվում են սահմանված հերթականությամբ՝ մինչև բոլոր արոտավանդակների արածեցման ավարտը, որից հետո կենդանիները դարձյալ փոխադրվում են առաջին արոտավանդակ և սկսվում է արածեցման հաջորդ բոլորապտույտը՝ ըստ հերթականության:
17. Արածեցված արոտավայրերում բույսերի կայուն վերաճ ապահովելու նպատակով արածեցման երկրորդ բոլորապտույտը պետք է սկսել առաջին բոլորապտույտի ավարտից 20-25 օր հետո, հաջորդ բոլորապտույտները՝ 35-40 օր անց, իսկ արոտավանդակներում արածեցման տևողությունը պետք է կազմի առաջին բոլորապտույտում՝ 2-3 օր, հաջորդ բոլորապտույտներում՝ 3-5 օրից ոչ ավելի:
18. Արոտավայրերում կենդանիների մակատեղերը (գիշերավայրը) պետք է կառուցել՝ ջրելատեղերից 300-500 մ հեռավորության վրա:

19. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝

- կթու կովերի համար՝ 1-1.5 կմ-ից ոչ ավելի.
- բտվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1.5-25 կմ-ից ոչ ավելի:

20. Արոտավանդակների սահմանազատման նպատակով, որպես բնական սահմաններ, կարող են ծա-ռայել արոտատարածքում առկա ձորակները, գետակները, հեղեղատները, թեքությունները, բա-ցատները, թփուտները, ճանապարհները, իսկ դրանց բացակայության դեպքում անհրաժեշտ է օգտագործել շարժական ցանկապատեր, որոնցից առավել արդյունավետ են էլեկտրացանկապա-տերը:
21. Բնական խոտհարքներն օգտագործման են տրամադրվում խոտհնձի նպատակով: Խոտհնձի լավագույն ժամկետ է սահմանվում բուսածածկում գերակշռող արժեքավոր հացազգի (դաշտավլուկազգի) խոտաբույսերի հասկակալումից մինչև ծաղկման, իսկ թիթեռնածաղկավոր (բակլազգի) խոտաբույսերի դեպքում՝ կոկոնակալումից մինչև ծաղկման փուլն ընկած ժամանակաշրջանը:
22. Բնական խոտհարքներում խոտհունձն իրականացվում է 7-10 օրվա ընթացքում, երբ խոտի բարձ-րությունը հողի մակերեսից կազմում է 4-6 սմ:
23. 23. Բնական խոտհարքներում յուրաքանչյուր երրորդ տարում խոտհունձն իրականացվում է խոտ-հնձի սեզոնի վերջում՝ բույսերին սերմնակալման և բնական վերարտադրության հնարավորություն ընձեռելու նպատակով:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

12. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ և ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Ա.Թամազյանը, Կ.Սիմոնյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Երիցյանը, Հ.Ձավարյանը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - լրագրող Լ.Փարեմուզյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու և պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմնի միջոցով 2024 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

13. ԼՍԵՑԻՆ – ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0150-0404 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի 02/02/2023թ. N 01/112,3/00725-2023 գրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է.

1. Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 7/1 հասցեում գտնվող, 06-002-0150-0404 կադաստրային ծածկագրով, 0.015 հեկտար մակերեսով հողամասն անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել «Սիմոնյան» կրթական հիմնադրամին «Թումոն տուփի մեջ» նոր կենտրոն հիմնելու նպատակով:
2. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հետ կնքել հողամասի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

14. ԼՍԵՑԻՆ – ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0158-0068 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2) կետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4) ենթակետով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, թիվ ՎԴ6/0019/05/20 վարչական գործով դատարանի վճիռը, սեփականության իրավունքի N 06-002-0158-0068 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է

1. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Թումանյան փողոց, 53/4 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0158-0068 ծածկագրով՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման նշանակության 0.0015 հա մակերեսով հողամասը, 28166 /քսանութ հազար հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել Զավեն Նոդարիկի Նոնինյանին:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

15. ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0160-0010 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգքրի 63-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով Մարիաննա Օնանյանի դիմումը, Ալավերդու քաղխորհրդի գործկոմի 08.10.1997թ. թիվ 157 որոշման քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի կադաստրային քարտեզի 06-002-0160-0010 ծածկագրով բնակարանի զբաղեցրած՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00613 հա մակերեսով հողամասը 74848 /յոթանասունչորս հազար ութ հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել բնակարանի համասեփականատերեր հանդիսացող՝ Մարիաննա Սեյրանի Օնանյանին, Մերի Սեյրանի Օնանյանին և Լենա Սեյրանի Օնանյանին որպես օրենքով գնման նախապատվության իրավունք ունեցողներ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

16. ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ /06-060-0220-0023 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ/, ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌՈՎ ԱՆՅՈՒՏԱ ՀԵՆՐԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Ձավարյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2) կետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4) ենթակետով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, թիվ ԼԴ2/0381/02/20 քաղաքացիական գործով դատարանի վճիռը, «ՏՍ-Ռիելթի» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, հաշվի առնելով, որ Անյուտա Հենրիկի Սարգսյանն ընդունել է անասնաշենքի սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Թիվ ԼԴ2/0381/02/20 քաղաքացիական գործով դատարանի վճռով սեփական ճանաչված անասնաշենքի զբաղեցրած՝ 0.05031 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը, 169344 /հարյուր վաթսունինը հազար երեք հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել Անյուտա Հենրիկի Սարգսյանին:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

17. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-017-0312-0003 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2.79481 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ և ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29) ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ ջրային կոմիտեի նախագահի 08.05.2023թ. N 01/15/2230-2023 գրությունը, նախագծման թույլտվության հայտը, ՀՀ Լոռու մարզպետարանի N 01/111.4/03341-2023 - 10/05/2023 գրությունը, սեփականության իրավունքի N 23052023-06-0073 վկայականը.

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Արդվի գյուղի վարչական տարածքում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-0170312-0003 ծածկագրում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող՝ 2.79481 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքը փոխադրել ջրային հողեր նպատակային նշանակության, ջրամբարների հողեր գործառնական նշանակության՝ 50 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազան կառուցելու նպատակով:
2. Հողի նպատակային նշանակությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կայացնել որոշում տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին և ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ.Ձավարյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 25052023-06-0088, N 14092022-06-0062 և N 19092022-06-0022 վկայականները, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը.

համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ախթալա քաղաք, Հ. Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, 5 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-003-0016-0038 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.0054 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել հարյուր հազար (100000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս 2/34 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0061-0182 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.0035 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել հարյուր հինգ հազար (105000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Հ. Թումանյան փողոց, 70/3 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0796-0013 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման

գործառնական նշանակության, 0.00297 հեկտար մակերեսով հողամասը, հասարակական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել երկու հարյուր հազար (200000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի քաղաքի վարչական տարածքում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0150-0001 ծածկագրից առանձնացվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.01795 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել վեց հարյուր հազար (600000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

5. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտայինօբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
6. Հողամասերի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
7. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դ.Ղումաշյանը, Հ.Ձավարյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետով և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները:

2. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեության թույլտվությունը տրամադրում կամ մերժում է Ալավերդի համայնքի ղեկավարը:

3. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի, անհատական բնակելի տների, կրթական և մշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, մարզական և սոցիալական կազմակերպությունների, բժշկական հաստատությունների, այլ հիմնարկների, գրասենյակների ու հաստատությունների, հյուրանոցների, հանրային սննդի օբյեկտների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերի, զբոսայգիների, այգիների, պուրակների, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերի տարածքներում տեղակայելն արգելվում է:

4. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները՝ կարաոկե, դիսկոտեկ, հեստա-պարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ (բացառությամբ բուժական մերսման սրահների) Ալավերդի համայնքում պետք է տեղակայվեն՝

1) **կարաոկե՝** սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ հաճախորդը, օգտագործելով նախապես ընտրված երգի ինտերակտիվ նվագակցությունը, ցուցադրում է սիրո-ղական երգեցողություն՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 50 մետր հեռավորության վրա:

2) **դիսկոտեկ**՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ բարդ ձայնային և լուսավորման համակարգերի ներքո, մշտական պարահրապարակի առկայությամբ, ինչպես նաև վերարտադրված երաժշտության մատուցմամբ, կազմակերպվում են պարային միջոցառումներ՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 50 մետր հեռա-վորության վրա:

3) **հեստապարային ակումբ**՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ կազմակերպվում է հեստապար, հեստապար՝ պարերով և (կամ) երաժշտությամբ ուղեկցվող բեմական ներկայացում, որի մասնակիցները ներկայացման ընթացքում աստիճանաբար մասամբ կամ լրիվ մերկանում են՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 100 մետր հեռավորության վրա:

4) **բաղնիք, սաունա և շոգեբաղնիք**՝ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հյուրանոցային տնտեսության օբյեկտների մաս չկազմող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 20 մետր հեռա-վորության վրա:

5) **մերսման սրահ**՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ մկանային լարվածությունը թուլացնելու նպատակով մերսողի ձեռքերի կամ հատուկ սարքերի միջոցով

մեխանիկական և չափավոր ազդեցություն է ներգործվում մարդու մարմնի վրա՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված տարածքներից՝ ոչ պակաս, քան 20 մետր հեռավորության վրա:

Որոշումն ընդունվեց. 14 կողմ, 0 դեմ, 11 ձեռնպահ:

20. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Գ.Հովվյանը,

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջները.

համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Ալավերդի համայնքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱԼԱՎԵՐԴԻ, ԱԽԹԱԼԱ, ՇԱՄԼՈՒՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՆ ԸՆԴԳՐԿՈՂ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1. Ալավերդի, Ախթալա, Շամլուղ քաղաքային բնակավայրերն ընդգրկող Ալավերդի համայնքում տնային կենդանիներ հաշվառելու և պահելու կանոններով (այսուհետ՝ Կանոններ) կարգավորվում են Ալավերդի համայնքում (այսուհետ՝ Համայնք) տնային կենդանիներ հաշվառելու, պահելու հետ կապված հարաբերությունները և տարածվում են Ալավերդի համայնքում գտնվող տնային կենդանիներ տիրապետող (պահող) ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա: Սույն կանոնների դրույթները տարածվում են բացառապես քաղաքային բնակավայրերում կենդանիներ պահելու և հաշվառելու իրավահարաբերությունների վրա:

2. Սույն Կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **տնային կենդանի** (այսուհետ՝ կենդանի)՝ պատմականորեն մարդու կողմից ընտելացված կենդանի, սույն կանոնների իմաստով նշված հասկացությունը կիրառելի է միայն շների և կատուների համար.

2) **գյուղատնտեսական կենդանի՝** մարդու կողմից սննդամթերքի արտադրության համար պատմականորեն ընտելացված և բուծվող կենդանի.

3) **տնային կենդանի տիրապետող** (այսուհետ՝ տիրապետող)՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում հսկողության և (կամ) խնամքի ներքո գտնվում է կենդանին.

4) **տնային կենդանիների նույնականացում՝** տնային կենդանիների վրա ամրացված նույնականացման յուրահատուկ, չկրկնվող համարներին համապատասխան կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգում կենդանիների մասին տվյալների հաշվառում, ինչը հնարավորություն է ընձեռում անհատականացնել կենդանիներին: Տնային կենդանիների վրա նույնականացման չկրկնվող համարներն ամրացվում են համայնքային անասնաբույժի կամ անասնաբուժական ծառայության միջոցով՝ կենդանու մարմնի որոշակի մասում ծածկագրավորված տեղեկություն պարունակող հատուկ էլեկտրոնային միկրոչիպի՝ կրիչի ներարկման կամ դաջվածքի միջոցով.

5) **տնային կենդանիներ պահելու թույլտվություն՝** համայնքի ղեկավարի կողմից սույն կանոններով սահմանված պահանջներին համապատասխան տրված թույլտվություն:

2. Տիրապետողի իրավունքները և պարտականությունները

3. Տիրապետողն իրավունք ունի՝

1) հիմնել կենդանիների տիրապետողների կազմակերպություն և (կամ) անդամակցել դրան,

2) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն կենդանուն հաշվառելու և պահելու հետ կապ-ված հարցերի վերաբերյալ,

3) սույն կանոններով նախատեսված այլ իրավունքներ:

4. Տիրապետողը պարտավոր է՝

1) սույն կանոններին համապատասխան 15-օրյա ժամկետում իրականացնել նոր ձեռք բերված կենդանու հաշվառումը,

2) կենդանուն պահել դրա կենսաբանական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան և ապահովել սննդի, ջրի, քնի, շարժման, բնական ակտիվության նը-կատմամբ նրա պահանջները,

3) պահպանել կենդանուն պահելու սանիտարահիգիենիկ կանոնները, այդ թվում՝ իրականացնել կենդանու տարեկան պատվաստումը կատաղության դեմ,
4) անհապաղ անասնաբուժական կամ առողջապահական կազմակերպություններին հայտնել կենդանու կողմից մարդու կամ այլ կենդանու առողջությանը վնաս հասցնելու մասին և զննման ու կարանտինային հսկողության իրականացման համար կենդանուն տե-ղափոխել մոտակա անասնաբուժական կազմակերպություն,
5) անհապաղ անասնաբուժական կազմակերպությանը հայտնել կենդանու կատաղության հիվանդության կասկածի մասին և մինչ անասնաբույժ–մասնագետի ժամանումը մեկուսացնել կենդանուն,
6) կենդանու հիվանդությունների կանխման նպատակով իրականացնել սանիտարահիգիենիկ միջոցառումներ,
7) բացառել կենդանու կողմից ընդհանուր օգտագործման տարածքների, բակերի մայթերի, փողոցների, սիզամարգերի, ինչպես նաև հանգստյան կանաչ գոտիների աղտոտումը,
8) կենդանուն պահելուց հրաժարվելու դեպքում փոխանցել այլ անձի,
9) արգելվում է կենդանուն թողնել առանց հսկողության,
10) կենդանի պահելու համար ձեռք բերել համապատասխան թույլտվություն՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,
11) ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասազերծման ապահովման կենդանուն դուրս չհանել,
12) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով տիրապետողի համար սահմանված այլ նորմերը և կանոնները:

3. Կենդանիների հաշվառումը

5. Կենդանիների հաշվառումն իրականացվում է մարդկանց և կենդանիների համար հատկապես վտանգավոր և վարակիչ հիվանդությունների հայտնաբերման, վարակված կենդանիների հայտնաբերման ու պրոֆիլակտիկայի ենթարկելու նպատակով:

6. Կենդանիները հաշվառման են ենթակա սկսած վեց ամսական հասակից:

7. Հաշվառման ենթակա չեն մանր կենդանիներն ու թռչունները, որոնք պահվում են դեկորատիվ նպատակով, ինչպես նաև կենդանաբանական այգիներում պահվող կենդանիները:

8. Հաշվառումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ կենդանիների քանակի և դրանց կուտակումների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկությունների հավաքագրման միջոցով բնակչության իրավունքների և շահերի հաշվառմամբ, կենդանիների պահման համար համալիր միջոցառումների պլանավորման և կատարման նպատակով:

9. Կենդանիների հաշվառումն իրականացվում է դրանց ձեռքբերման կամ Ալավերդի համայնքի տարածք ներմուծման պահից 15-օրյա ժամկետում:

10. Հաշվառման արդյունքում տիրապետողին տրվում է գրանցման վկայական և նույնականացման համար: Հաշվառման մասին նշում է կատարվում կենդանիների հաշվառ-ման գրքում:

11. Կենդանուն նույնականացման համարը նշվում է կենդանու վզնոցի վրա:

12. Կենդանու հաշվառման ժամանակ տիրապետողը պարտադիր պետք է ծանուցվի կանոնների մասին, ինչը հավաստվում է տիրապետողի ստորագրությամբ: Տիրապետողն իրավունք ունի հաշվառող մարմնից անվճար տեղեկություններ ստանալ այն վայրերի մա-սին, որտեղ ինքն իրավունք ունի կազմակերպել կենդանու զբոսանքը կամ արոտը, ինչպես նաև այն վայրերի մասին, որտեղ թույլատրված է կենդանիների թաղումը:

13. Կենդանու մահվան կամ սպանդի դեպքում կենդանու տիրապետողը պարտավոր է հաշվառող մարմնին հանձնել գրանցման վկայականը, ինչի մասին նշում է կատարվում գրանցման գրքում:

14. Կենդանուն այլ անձի տիրապետությանը հանձնելու դեպքում կենդանու հետագա վերահաշվառում իրականացնելու համար նոր տիրապետողին են հանձնվում կենդանուն նույնականացնող համարի նշումով կենդանու վզնոցը և գրանցման վկայականը:

15. Գրանցման գրքույկում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

1) գրառման հերթական համարը և հաշվառման տարեթիվը,
2) տիրապետողի անունը, ազգանունը, բնակության հասցեն, անձնագրի տվյալները,
3) կենդանու տեսակը, անունը, սեռը, գույնը, ցեղատեսակը, ծննդյան թիվը (եթե հայտնի է),
4) գրանցման վկայականի տրամադրման ամսաթիվը և հերթական համարը,
5) կենդանու նույնականացման համարը,
6) տիրապետողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը,
7) այլ տեղեկություններ:

16. Գրանցման վկայականի կորստյան դեպքում տիրապետողի դիմումի հիման վրա նրան տրվում է գրանցման նոր վկայական:

4. Կենդանիներին պահելու, զբոսանքի իրականացման և վաճառքի պայմանները

17. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են կենդանիներին պահելիս հաշվի առնել այդ կենդանիների կենսաբանական և անհատական առանձնահատկությունները, պահպանել օրենսդրությունը, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

18. Բնակելի շենքերում կենդանիներ մշտապես կամ ժամանակավորապես պահելիս պետք է ապահովվեն մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմանները:

19. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում կենդանի-ներ պահելն արգելվում է:

20. Կենդանիների զբոսանքն թույլատրվում է միայն այդ նպատակով հատուկ հատկացված տարածքներում: Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է իրականացվել ամայի կամ խոտածածկ տարածքներում, բացառությամբ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների:

21. Շների զբոսանքն իրականացնելու ժամանակ տիրապետողը պետք է ապահովի շրջապատող անձանց անվտանգությունը:

22. Շների զբոսանքի ժամանակ տիրապետողը պարտավոր է՝

1) շանը տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը: Մարդկանց և ուրիշի կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար, այսուհետ՝ ագրեսիվ շուն) պետք է ունենան դնչկալներ:

2) մայթերով շարժման ժամանակ, հետիոտնի ճանապարհին, մարդաշատ վայրերում և երթևեկության հատման մասերում ագրեսիվ շանը պահել դնչկալով:

23. Ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով, տիրապետողը պարտավոր է կենդանուն պահել կարճ կապի վրա:

24. Տիրապետողները պարտավոր են թույլ չտալ մայթերի կամ այլ հանրային օգտագործման տարածքների աղտոտումը կենդանու զբոսանքի ընթացքում, ինչպես նաև պարտա-վոր են մաքրել դրանց կենսագործունեության արդյունքները:

25. Շներ տիրապետողները իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացման շինություններում:

26. Կենդանիների վաճառքը թույլատրվում է իրականացնել մասնագիտացված խանութներում, կենդանիների շուկաներում կամ այդ նպատակի համար հարմարեցված հատուկ առանձնացված վայրերում՝ անասնաբուժական հատուկ վկայականի առկայության դեպ-քում:

27. Հասարակական վայրերում (խանութների հարևանությամբ, այգիներում, կայարաններում, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում և այլն) կենդանիների վաճառքն արգելվում է:

28. Տիրապետողներն իրավունք ունեն կենդանիներին տեղափոխել քաղաքային տրանսպորտով: Շները պետք է քաղաքային տրանսպորտով փոխադրվեն կարճ կապով և դնչկալով, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր առանց ցեղատեսակի շների, որոնք տեղափոխվում են պայուսակներում կամ տեղափոխման համար հարմարեցված սարքերում:

29. Արգելվում է՝

1) կենդանուն գրգռել մարդկանց և կենդանիների դեմ,

2) կռիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որոնց արդյունքում կենդանին կարող է տանջվել, ցավեցվել, վնասվել կամ սպանվել,

3) կենդանիների երկարատև կամ մշտապես պահումը տրանսպորտային միջոցում,

4) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն,

5) հարբած անձանց և 14 տարին չլրացած անչափահասներին 15 կիլոգրամից ավելի քաշ ունեցող շներին զբոսանքի տանելը,

6) կենդանիների հետ խանութներ, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտներ, բժշկական, կրթական և մշակութային հաստատություններ այցելելը, բացառությամբ ցուցադրության կամ համանման այլ միջոցառումների այցելության դեպքերի:

5. Կենդանիների դիերի թաղումը և թափոնումը

30. Տիրապետողները իրավունք ունեն թաղելու և թափոնելու իրենց պատկանող կենդանիների դիերը:

31. Կենդանիների դիերի թաղումն իրականացվում է այդ նպատակով Ալավերդի համայնքի ղեկավարի կողմից հատուկ առանձնացված վայրերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

6. Գյուղատնտեսական տնային կենդանիների պահելու առանձնահատկությունները

32. Գյուղատնտեսական տնային կենդանիներ պահելու վերաբերյալ սույն կանոնների դրույթները տարածվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն գլխի դրույթներին:

33. Ալավերդի համայնքի տարածքում կենդանի պահելու թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

34. Կենդանի պահելու թույլտվություն կարող է տրվել այն անձին, ով ունի գյուղատնտեսական տնային կենդանի պահելու համար անհրաժեշտ պայմաններ:

35. Կենդանիների զբոսանքը կամ արոտը կարող է կազմակերպվել տիրապետող անձի հսկողության ներքո՝ միայն դրա համար նախատեսված վայրերում:

36. Արգելվում է կենդանու ազատ կամ կապված արոտը դրա համար չնախատեսված վայրերում (փողոց, զբոսայգի, պուրակ, տնամերձ տարածք և այլն):

37. Տիրապետողները պարտավոր են հիվանդությունների կանխման նպատակով ապահովել համապատասխան անասնաբուժական միջոցառումների իրականացումը, թույլ չտալ շրջակա միջավայրի աղտոտումը կենդանիների կենսագործունեության արդյունքներում:

38. Մեղվապահները պարտավոր են մեղուները պահել իրենց տարածքներում, որոնք պետք է սահմանազատված լինեն երկու մետրից ոչ պակաս բարձրության պարսպով:

7. Կանոնները խախտելու պատասխանատվությունը

39. Սույն կանոնների խախտումն առաջացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ օրենքով նախատեսված պատասխանատվություն:

8. Անցումային դրույթներ

40. Տիրապետողները պարտավոր են հաշվառել իրենց տիրապետության ներքո գտնվող կենդանիներին՝ Կանոններն ուժի մեջ մտնելուց հետո ամսվա ընթացքում:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

21. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Ձավարյանը, Մ.Մարգարյանը,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 21.02.2023թ. N 235-Ա, 27.04.2023թ. N 531-Ա, 13.03.2023թ. N 307-Ա, 21.02.2023թ. N 234-Ա, 13.03.2023թ. N 308-Ա, 13.03.2023թ. N 309-Ա, 11.04.2023թ. N 436-Ա, 11.05.2023թ. N 602-Ա, 25.04.2023թ. N 506-Ա, 24.09.2020թ. N 305-Ա, 16.05.2023թ. N 618-Ա, 17.05.2023թ. N 629-Ա, 17.05.2023թ. N 626-Ա, 06.06.2023թ. N 697-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 04052023-06-0078, N 12052023-06-0043, N 23032023-06-0076, N 15052023-06-0003, N 16052023-06-0031, N 16052023-06-0025, N 17052023-06-0029, N 26052023-06-0020, N 29122020-06-0045, N 07062023-06-0024, N 07062023-06-0039, N 07062023-06-0041 և N 14062023-06-0035 վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը,

համայնքի ավագանին որոշում է.

1.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Երևանյան խճուղի 4/31 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 24.09.2020թ N 305-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 32.2 քմ արտաքին մակերեսով (20.05 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,0982 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0010-0087/ ուղղակի վաճառքով օտարել Հարություն Արտաշեսի Աբգարյանիին:

1) Բնակելի տան համար մուծման վճարը կազմում է 99305 (իննսունինը հազար երեք հարյուր հինգ) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 3084 /երեք հազար ութսունչորս/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 777744 (յոթ հարյուր յոթանասունյոթ հազար քառասունչորս) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ):

2.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս 28 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 21.02.2023թ N 235-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 22.28 քմ արտաքին մակերեսով մառանը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00237 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0152-0004/ ուղղակի վաճառքով օտարել Վահե Ալեքսանի Էվոյանին:

1) Մառանի համար մուծման վճարը կազմում է 45808 (քառասունհինգ հազար ութ հարյուր ութ) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 2056 /երկու հազար հիսունվեց/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 18771 (տասնութ հազար յոթ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ):

3.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Ջրավազան փողոց, 145 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 27.04.2023թ N 531-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 45.5 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,002445 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0023-0113/ ուղղակի վաճառքով օտարել Գոհար Ռուբիկի Սիրադեղյանին:

1) Ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 33807 (երեսուներեք հազար ութ հարյուր յոթ) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 743 /յոթ հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 8230 (ութ հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 336,6 //երեք հարյուր երեսունվեց ամբողջ վեց տասներորդական/ ՀՀ դրամ):

4.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Քարկոփ գյուղ, 1-ին փողոց, 10 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 13.03.2023թ N 307-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 35.69 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00357 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-111-0004-0111/ ուղղակի վաճառքով օտարել Կարեն Փաշիկի Հովասափյանին:

1) Ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 16275 (տասնվեց հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 456 /չորս հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 3299 (երեք հազար երկու հարյուր իննսունինը) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 92.4 /իննսուներկու ամբողջ չորս տասերորդական/ ՀՀ դրամ):

5.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Գայի փողոց 30 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 21.02.2023թ N 234-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 47.4 քմ արտաքին մակերեսով տնտեսական սենյակը, 0.8 քմ արտաքին մակերեսով զուգարանը, 3.1 քմ մակերեսով պարիսպը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,0071 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0152-0104/ ուղղակի վաճառքով օտարել Վահե Ալեքսանի Էվոյանին:

1) Շինությունների համար մուծման վճարն ընդհանուր կազմում է 105473 (հարյուր հինգ հազար չորս հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 2056 /երկու հազար հիսունվեց/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 56232 (հիսունվեց հազար երկու հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ):

6.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Քարկոփ գյուղ, 1-ի փողոց, 11 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 13.03.2023թ N 308-Ա որոշումով համայնքային

սեփականություն ճանաչված և օրինականացված, 87.93 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00497 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-111-0004-0112/ ուղղակի վաճառքով օտարել Սամվել Սեյրանի Պապինյանին:

1) Ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 40097 (քառասուն հազար իննսունյոթ) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 456 /չորս հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 4593 (քառասունհինգ հազար իննսուներեք) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 92.4 /իննսուներկու ամբողջ չորս տասերորդական/ ՀՀ դրամ):

7.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Քարկոփ գյուղ, 1-ի փողոց, 12 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 13.03.2023թ N 309-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 21.3 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00213 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-111-0004-0069/ ուղղակի վաճառքով օտարել Սամվել Սեյրանի Պապինյանին:

1) Ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 9713 (իննսունյոթ հազար տասներեք) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 456 /չորս հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 1969 (տասնինը հազար վաթսունինը) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 92.4 /իննսուներկու ամբողջ չորս տասերորդական/ ՀՀ դրամ):

8.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Դեբեդ թաղամաս, 18/30 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 11.04.2023թ N 436-Ա և 11.05.2023թ. N 602-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 3.8 քմ մակերեսով պարիսպը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,001744 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0165-0035/ ուղղակի վաճառքով օտարել Սիրվարդ Ալբերտի Կիրակոսյանին:

1) Պարիսպի համար մուծման վճարը կազմում է 7813 (յոթ հազար ութ հարյուր տասներեք) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 2056 /երկու հազար հիսունվեց/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 13813 (տասներեք հազար ութ հարյուր տասներեք) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ):

9.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, 67 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 25.04.2023թ N 506-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 98.9 քմ արտաքին մակերեսով տնտեսական սենյակով ավտոտնակը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00494 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0177/ ուղղակի վաճառքով օտարել Սամվել Պարանյանին:

1) Տնտեսական սենյակով ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 101670 (հարյուր մեկ հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 1028 /հազար քսանութ/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 39125 (երեսունինը հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ):

10.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Էնգելս թաղամաս, 136 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 16.05.2023թ N 618-Ա որոշումով

համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 28,1 քմ արտաքին մակերեսով այգետնակը, 15,2 քմ արտաքին մակերեսով մառանը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,0211 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0050-0243/ ուղղակի վաճառքով օտարել Ռոբերտ Ռաֆիկի Մարգարյանին:

1) Այգետնակի համար մուծման վճարը կազմում է 101919 (հարյուր մեկ հազար ինը հարյուր տասնինը) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 3627 /երեսունվեց հազար քսանյոթ/ ՀՀ դրամ):
2) Մառանի համար մուծման վճարը կազմում է 36754 (երեսունվեց հազար յոթ հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 2418 /քսանչորս հազար տասնութ/ ՀՀ դրամ):
3) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 257631 (երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 1221 /հազար երկու հարյուր քսանմեկ/) ՀՀ դրամ:

11.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին կայարան թաղամաս, 5/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 17.05.2023թ N 626-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 80.95 քմ արտաքին մակերեսով տնտեսական սենյակով ավտոտնակը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00445 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0201-0032/ ուղղակի վաճառքով օտարել Ռոբերտ Շահբազյանին:

1) Տնտեսական սենյակով ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 83217 (ութսուներեք հազար երկու հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 1028 /հազար քսանութ/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 35244 (երեսունհինգ հազար երկու հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու / ՀՀ դրամ):

12.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, 115 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 17.05.2023թ N 629-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 28.2 քմ արտաքին մակերեսով բնակելի տան մասը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,0029 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0152-0105/ ուղղակի վաճառքով օտարել Կամո Սերյոժայի Մխիթարյանին:

1) Բնակելի տան մասի համար մուծման վճարը կազմում է 86969 (ութսունվեց հազար ինը հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 3084 /երեք հազար ութսունչորս/ ՀՀ դրամ):
2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 22968 (քսաներկու հազար ինը հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ):

13.ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, 156 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 06.06.2023թ N 697-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 29.1 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00291 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0405/ ուղղակի վաճառքով օտարել Աղվան Ալբերտի Պետրոսյանին:

1) Ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 29915 (քսանինը հազար ինը հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 1028 /հազար քսանութ/ ՀՀ դրամ):

2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 23048 (քսաներեք հազար քառասունութ) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ):
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-002-0050-0239 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.92495 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը,

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, 77-րդ և 80-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածների, 56-րդ հոդվածի առաջին, հինգերորդ և ութերորդ մասերի, 57-րդ հոդվածի առաջին, երկրորդ և յոթերորդ մասերի, 76-րդ, 77-րդ, 78-րդ, հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի առաջարկությունը, N 13062023-06-0014 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան, համայնքային սեփականություն հանդիսացող ներքոնշյալ հողամասը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով տրամադրել ժամանակավոր օգտագործման:
   1.1. Համայնքի Ալավերդի քաղաքի կադաստրային քարտեզի 06-002-0050-0239 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք հողատեսքի, 0.92495 հեկտար մակերեսով հողամասը:
   Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել՝ 20000 (քսան հազար) դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք

ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Հողամասի վարձակալությամբ իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
2) Հողամասը վարձակալությամբ իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով դրանք նախատեսված չեն այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

3. Համայնքի ղեկավարին՝
   1) Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մրցութային հանձնաժողով և գլխավորել այն, ինչպես նաև սահմանել մրցույթի պայմանները (հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության ժամկետը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները, կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ):
   2) Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով սահմանել մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:
   3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

23.ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄՈՋ, ՓՈՔՐ ԱՅՐՈՒՄ, ԲԵՆԴԻԿ, ԱԽԹԱԼԱ և ԱՌՈՂՋԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՂԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄԵԿ ԱՅԼ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4.2-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է.

1. Ալավերդի համայնքի կազմում ընդգրկված, 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող Ամոջ գյուղի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը վերապահել Օձուն բնակավայրի վարչական ղեկավարին, Ախթալա և Բենդիկ գյուղերի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը՝ Շամլուղ բնակավայրի վարչական ղեկավարին, Առողջարանին կից և Փոքր Այրում գյուղերի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը՝ Մեծ Այրում բնակավայրի վարչական ղեկավարին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

24. ԱՐՏՈՒՇ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԱԲԵԼՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Ձավարյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետով,
հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է.

1. Արտուշ Մերուժանի Աբելյանին նշանակել Ալավերդի համայնքի ղեկավարի տեղակալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Որոշումն չընդունվեց. 12 կողմ, 12 դեմ, 1 ձեռնպահ:

25. ՍԱՍՈՒՆ ՎՐՈՒՅՐԻ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Հախվերդյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետով,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է.

1. Սասուն Վրույրի Վարդումյանին նշանակել Ալավերդի համայնքի ղեկավարի տեղակալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Որոշումն չընդունվեց. 12 կողմ, 12 դեմ, 1 ձեռնպահ:

25. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.04.2023Թ. Ն 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Դ.Ղումաշյանը, Հ. Հախվերդյանը, Ա.Թամազյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 04-ի «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանին պատկանող, համայնքային գույք հանդիսացող հենասյուները օգտագործման տրամադրելու մասին» Ն 31-Ա որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.
   «Յուրաքանչյուր հենասյան համար քաղաքային բնակավայրերում սահմանել 250 /երկու հարյուր հիսուն/, գյուղական բնակավայրերում՝ 150 /մեկ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ ամսական վարձավճար և կնքել վարձակալության իրավունքի անժամկետ պայմանագիր, ցանկացած պարագայում համայնքի կողմից միակողմանի կամ երկկողմանի դադարեցնելու պայմանով»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

26. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Ա.Թամազյանը, Ս.Թորոսյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Դ.Ղումաշյանը, Հ. Հախվերդյանը, Ա.Թամազյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 08 հունվարի 2016թ. N 2-Ն հրամանով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 29 նոյեմբերի 2022 թվականի N 40 կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովի կազմած գույքագրման ցուցակները՝

համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Ալավերդի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն կազմված գույքագրման ցուցակների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանը հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 0 դեմ, 12 ձեռնպահ:

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ՕՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Դ.Ղումաշյանը, Հ. Հախվերդյանը, Ա.Թամազյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին մասի 32-րդ կետի՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի հերթական նստաշրջանի նիստերի օրերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանը հաջորդող օրը:

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ՕՐԵՐԸ

1. 2023 թվականի սեպտեմբերի 26 ժամը $15^{\underline{00}}$.
2. 2023 թվականի հոկտեմբերի 13 ժամը $15^{\underline{00}}$.
3. 2023 թվականի նոյեմբերի 15 ժամը $15^{\underline{00}}$.
4. 2023 թվականի դեկտեմբերի 26 ժամը $15^{\underline{00}}$:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Ա.Դավիթավյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դ.Ղումաշյանը, Հ. Հախվերդյանը, Ա.Թամազյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Ալավերդու համայնքապետարանի, համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկման հանձնաժողով»-ի թիվ 5 արձանագրությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Ն	ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵ	ՀԵՌԱԽՈՍԱ-ՀԱՄԱՐ	ԳՈՒՄԱՐԸ
	Լևոն Շամստանի Պետրոսյան	Ալավերդի համայնք, ք.Ալավերդի, Էնգելսի 96Ա տուն	098-22-94-84	10000
	Ռուզան Համլետի Վարդումյան	Ալավերդի համայնք, գ.Ճոճկան 2 փ., 29 տուն	077-27-97-16	10000
	Ռոզա Վերանի Նիազյան	Ալավերդի համայնք, գ. Աքորի, 3 փ., փկղ.1, 5 տուն	099-90-25-78	10000
	Սամվել Սարգսի Գրիգորյան	Ալավերդի համայնք, ք.Ալավերդի, Սանահին Սարահարթ 2, շն.27, բն.31	093-07-54-08	10000
	Ռիտա Սենիկի Պեպանյան	Ալավերդի համայնք, ք.Ալավերդի, Բաղրամյան շն.10, բն.1	077-72-74-19	10000
	Մարատ Արմենակի Ֆարամազյան	Ալավերդի համայնք, գ.Մեծ Այրում, 6փ., 125 տուն	077-08-73-05	10000
	Սվետլանա Ստյոպայի Նալբանդյան	Ալավերդի համայնք, Սանահին Սարահարթ 3, շն.3, բն.10	098-39-64-41	10000
	Նաիրա Սերյոժայի Օհանյան	Ալավերդի համայնք, ք.Ախթալա, Աբովյան փ., 12 տնակ	077-66-09-15	10000
	Ռոզիկ Աշոտի Թաթոյան	Ալավերդի համայնք, Սանահին Սարահարթ 3,. շն.12, բն.19	091-11-01-48	10000
0	Սիրվարդ Զավենի Նալբանդյան	Ալավերդի համայնք, գ.Օձուն, 1 նրբ., 10/1 տուն	043-07-85-99	10000
1	Թամարա Սանդրոյի Մաթոսյան	Ալավերդի համայնք, գ. Ճոճկան, 5 փ., 5 տուն	096-84-65-46	10000
2	Սիրվարդ Սուրենի Բեգջանյան	Ալավերդի համայնք, Սանահին սարահարթ 2, շն.22, բն.26	093-40-45-30	10000
3	Ռուզաննա Ռազմիկի Կիրակոսյան	Ալավերդի համայնք, գ.Աքորի, 1 փ., 4 նրբ., 4 տնակ	094-15-79-13	10000
4	Սուսաննա Նշանի Գալստյան	Ալավերդի համայնք, գ. Կարմիր Աղեկ, 2 փ., 26 տուն	094-03-13-63	10000

5	Ալվարդ Հրաչիկի Վերմիշյան	Ալավերդի համայնք, գ.Աքորի, 1 փ., 49ա տնակ	93-75-70-98	10000
6	Սրբուհի Ալեքսանի Շահբազյան	Ալավերդի համայնք, Սանահին Սարահարթ 1, շն.4, բն,50	077-71-73-29	15000
7	Անժելա Հրաչյայի Թաթոյան	Ալավերդի համայնք, գ.Աքորի, 2փ.,38 տուն		15000
8	Մանուշակ Սարգսի Անտոնյան	Ալավերդի համայնք, Սանահին Սարահարթ 2, շն.32, բն.58	099-52-32-58	15000
9	Արաքսի Հակոբի Թանքարյան	Ալավերդի համայնք, Դեբեդ շն.7 բն.15	094-83-17-92	15000
0	Արփինե Զավենի Աղաբեկյան	Ալավերդի համայնք, գ.Կարմիր Աղեկ, 2փ., 27 տուն	043-93-32-7	15000
1	Նատալյա Միքայելի Շահվերդյան	Ալավերդի համայնք, գ.Այգեհատ 7փ., 12 տուն	093-49-13-65	15000
2	Հերմինե Սեյրանի Հովասափյան	Ալավերդի համայնք, գ.Արդվի, 10փ., 8 տնակ	094-85-74-02	15000
3	Իրինա Բախշոյի Հակոբյան	Ալավերդի համայնք, Քարկոփ, 1փ., շն.1, բն.8		15000
4	Գայանե Սաշիկի Աղաջանյան	Ալավերդի համայնք, գ.Շնող, 1 փ., 1 նրբ., 4 տուն	093-46-42-55	15000
5	Պարգև Ավետիքի Պետրոսյան	Ալավերդի համայնք, գ.Աքորի, 4փ., 15 տուն	043-38-15-78	15000
6	Ամալյա Խորենի Մարտիրոսյան	Ալավերդի համայնք, գ.Աքորի, 2 փ., 36 տուն	044-18-04-48	20000
7	Արայիկ Սանասարի Թամազյան	Ալավերդի համայնք, գ.Կաճաճկուտ 3փ., 3 տուն	093-87-12-73	20000
8	Լևոն Ռազմիկի Մամաջանյան	Ալավերդի համայնք, գ.Օձուն, 11փ., 18 տուն	096-44-15-11	20000
9	Մերուժան Հրաչիկի Մաթոսյան	Ալավերդի համայնք, ք. Ալավերդի, Էնգելսի շն.8, բն.6	043-13-85-28	20000
0	Նունե Կարենի Ասլանյան	Ալավերդի համայնք, գ. Կաճաճկուտ 1փ., 10 տուն	077-13-71-44	20000
Ընդամնեը՝				**400000**

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 0 դեմ, 12 ձեռնպահ:

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը, Շ.Քառյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դ.Ղումաշյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով.

հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 08.05.2023թ. թիվ N 01/111.4/03291-2023 գրությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ալավերդի համայնքի հողային հաշվեկշիռը 2023 թվականի հուլիսի 01-ի դրությամբ՝ համաձայն N 22 և N 22ա ձևերի (կցվում են):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 0 դեմ, 12 ձեռնպահ:

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՅԵՑ - Ա.Թամազյանը, Ս.Թորոսյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դ.Ղումաշյանը, Հ.Ձավարյանը,:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 14 դեկտեմբերի 2022 թվականի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 39-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 12 դեմ, 0 ձեռնպահ:

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԶԵԿՈՒՑԵՑ - Ա.Թամազյանը,
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դ.Ղումաշյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Ալավերդի համայնքի ճոպանուղին և մարզադաշտը համայնքին վերադարձնելու և «Վալլեքս կապիտալ» ՓԲԸ-ի հետ համապատասխան պայմանագիր կնքելու մասին» N 42-Ա որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0048-0012 կադաստրային ծածկագրով, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց 16 հասցեում գտնվող, 1.2 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողամասը և հողամասում առկա 197.7 քառակուսի մետր մակերեսով մարզադաշտը ընդունել վարձակալության իրավունքով, 49 (քառասունինը) տարի ժամկետով, տարեկան 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ վարձավճարով»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց. 13 կողմ, 9 դեմ, 3 ձեռնպահ:

Ավագանու նիստը հեռարձակվել է առցանց:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. ԹԱՄԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՍԱՄՎԵԼԻ
2. ՊԱՊՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԼԲԵՐՏԻ
3. ԹՈՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՀԵՆՐԻԿԻ
4. ԹԱՄԱՋՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ
5. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԻՍՊԻՐԻ
6. ՏԻՏԱՆՅԱՆ ԱԲԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ
7. ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՍԵՅՐԱՆԻ
8. ՌԱՄԱՋՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԻԲԵԿԻ
9. ՎԱՐՈՍՅԱՆ ԹԱԳՈՒՀԻ ՄԵԽԱԿԻ
10. ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ ՍՈՒՐԵՆԻ
11. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԼԱՈՒՐԱ ԼՈՒՍԱԿԻ
12. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՐԱՄ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
13. ԴԱՎԹՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇԱԿԻ
14. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ
15. ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՐԱ ՆՈՐԱՅՐԻ
16. ՁԱՎԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԲԵՐՏԻ
17. ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ ՖԼՈՐԱ ՎԱՆՈՅԻ
18. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԱՐՇԱՎԻՐԻ
19. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ

20. ՋԱՆԻՆՅԱՆ ԱՄՐԱՍՏԱՆ ՌԱՖԻԿԻ _____

21. ՂՈՒԼՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ _____

22. ԵՐԻՑՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԺՈՐԱՅԻ _____

23. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՏԻ _____

24. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԱԼԲԵՐՏԻ _____

25. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ ԼԵՎՈՆԻ _____

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՍՏՅԱՆ**